

Լևոն Ալթունյանի ուղերձը բուժքույրերի միջազգային օրվա կապակցությամբ

Թանկագին բուժքույրեր,
ընդունեք իմ ջերմ շնորհավորանքը բուժքույրերի միջազգային օրվա կապակցությամբ:

Օրը լավ առիթ է երախտիքի անկեղծ խոսքեր հղելու մեր բոլոր այն բուժքույրերին, ովքեր մեծ նվիրումով են կատարում մասնագիտական իրենց պարտքը: Դուք նեցուկ եք լինում հիվանդին, ձեր ժպիտով ու բարի վերաբերմունքով նպաստում նրա ապաքինմանը: Միաժամանակ, ոչ մի բժիշկ չի կարող իր աշխատանքը պատկերացնել առանց բուժքրոջ մասնակցության: Դուք ձեր ներկայությամբ ձևավորում եք գթասրտության առանձնահատուկ մթնոլորտ:

Բժշկական ծառայությունների որակի ապահովման պահանջին համահունչ այսօր ավելի է մեծանում բուժքրոջ առաքելությունը: Վստահ եմ, որ, բարձրացնելով մասնագիտական ձեր ունակությունները, կշարունակեք զորակից լինել թե՛ հիվանդին, թե՛ համակարգին:

Մաղթում եմ ձեզ քաջառողջություն, խաղաղ երկինք, ընտանեկան ջերմություն և նորանոր հաջողություններ:

Լևոն Ալթունյան
«Ձ առողջապահության նախարար»